

891-41

O-71



19 NOV 2017

891.71

0-71

ՀՐԱՄԱՆԱԿՈՒԹԱԵՆ Բ. Հ. Ա. Մ.

ՀՅԱՆՏԱՐԱԿՅԱԼԱՆ ՄԱՍԻԱՑԽՎՈՂԻ ՀԵ 2.  
ԺՈՂՈՎՐԴՅԱԼԱՆ ԳՐԵՒՐԻ ՀԱՐ. ՀԵ 1

# ՎԻԼՅԵԼՄ ՏԵԼ

Ա. ՕՍՏՐՈՎՍԿԻ

1887  
33263



Բ Ա Գ Ո Ւ

Տպարան Ա. Մ. Թառահեացի Է. Լ. Գ. Միրզահեացի

1907

14563  
1000 VON 61

14563

ՎԻԼՀԵԼՄ ՏԵՇԱ



Եւրոպայի հիւսիսային կողմերում մի ժամանակ ապրում էր մի մեծ ազգ: Մի քանի տարի իրար ետեից նրանց հացի բերքը լաւ չէր լինում. զրա պատճառով ամեն ինչ էլ թանգացաւ: Մարդիքը հաւաքուեցին, խելք խելքի տուին ու շատ միաք անելուց յետոյ, ձարները կարած, վճռեցին՝ որ չօփ (վիճակ) գցեն ամեն մի տասը հոգու մէջ. չօփը ում որ ընկնի, նա պիտի թողնի իր հայրենիքը ու գնայ ինչ տեղ որ ուզում է. էլ ուրիշ ձար չը կար. հացը այնքան քիչ էր, որ ամենքին հէրիքութիւն չէր անիլ:

Մի խումբ տղամարդիք ու կանայք, տխուր ու տրտում, դուրս եկան ու գնացին գէպի հարաւ: Նրանք՝ իրանք իրանց համար նոր ձանապարհ էին բաց անում, իսկ հարկաւոր եկած տեղը՝ թուրի զօռով էին ձղում ու անց կենում: Վերջապէս, խումբը հասաւ անտառների մէջ կորած Ալ'պեան\*) սարերը.

\*) Ե՛ փշիկով տառը եւրոպական լիգուների 1 փափուկ հնչիւնն է արտայատում:

Дозволено цензурою. С.-Петербургъ, 1 декабря 1887 г.

Типографія А. Н. Тараєва и Л. Д. Мирзаянцъ, Баку.

այն տեղ վէր եկան մի անմարդաբնակ ձու  
ըում, որի ջուրը մի բարակ գետ էր ու մի  
լիճ։ Տեղը բերքի կողմից շատ հարուստ ու  
գեղեցիկ էր՝ չորս կողմը ձևնապատ սարե  
բազ պատած։ բայց այստեղ, որ ասես, մարդ-  
կային հետք էլ չէր երեսւմ։ Միայն լի ա  
փին կար մի քոսոտ խրճիթ։ այնտեղ կենում  
էր մի նաւազար, որը՝ եթէ հազարից մի ան-  
գամ մարդ էր պատահում, անց էր կացնում  
լի միւս կողմը։ Բայց սրանց բազիցն էր  
թէ չէ, միայն այս անգամ լիձը այնպէս էր  
ալէկոծվում, այնպէս էր կատաղած, որ ան-  
կարելի էր միւս ափը անց կենալ ու ոչ ոք  
էլ սկի սիրու չարաւ։

Այս նոր եկած ազգը, որ հելվետ էր առ-  
ւում, մի լաւ ման եկաւ այս տեղերը ու  
տեսաւ, որ սա շատ անտառներով ու ջրե-  
րով հարուստ երկիր է։ Դրանից յետոյ հել-  
վետները մնացին այստեղ ու Նից անու-  
նով մի շնչ զցեցին։ Է՞ն, ինչքան քրտինք  
թափեցին նրանք, ինչքան ահազին ծառեր  
են արմատահան արել, մինչև որ անանցնե-  
լի անտառները մաքրել են ծառերից։ Էլ  
ինչ ասես, որ արած չը լինեն. ճահիճներ

են չորացել, ժայռեր են կոռորատել ու յար-  
մար անապարհներ բաց արել անդունդնե-  
րի վերեներով։ Էլ ինչ ասեմ, մի խօսքով,  
առաջուայ անմարդաբնակ ու լուս տեղից  
գեղեցիկ ու մարդկերանցով լի մի տեղ են  
շինել։

Իսկ երբոր հելվետները տեսան որ տեղը  
նեղուածկութիւն է անում, նրանք Ռէյն, Ռո-  
նա ու Սար գետերի միջում գտնուող տե-  
ղերն էլ բոնեցին, դրանից յետոյ սկսեցին  
շվեյցարացի ասվել։ Ով գիտէ, թէ քանի  
քանի հարիւր տարիներ էին ապրում նրանք  
այստեղ, սարերում հօտեր արածացներով ու  
թեթևաշարժ քարայծերի ետևից ընկած չը,  
նայելով որ մարդուո կեանքը այդ տեղե-  
րում մի մազից էր կախուած։ Հովհանները ու  
որսորդները, որոնք իրանց ճակատի քրտին-  
քով ու սեփական արիւնով էին մշակել ի-  
րանց նոր հայրենիքը, համարձակ ու աշխա-  
տասէր մարդիկ էին. նրանց վախը միայն  
Ապուած էր, էլ ուրիշ վախ չունէին. ի-  
րանք քաջառողջ տղամարդներ ու լաւ նե-  
տածիդներ լինելով, միշտ պատրաստ էին ի-  
րանց անձը պաշտպանելու համար. ապրում

Էին իրանց պապենական սովորութիւններով  
ու կարգերով. Նրանց հողերովը անց էին կե-  
նում հազար տեսակ ազգութիւններ, այդ ազ-  
գերը միշտ ուզում էին նրանց տիրել, իրանց  
ձեռքի տակըցել ու իրանց ճորտը դարձնել-  
բայց շվեյցարացիք, պաշտպանուած լինելով  
իրանց լաւ ծանօթ բարձր ու պինդ սարերով,  
կարողացան պինդ պահել իրանց անկախու-  
թիւնը, աշխարհիս երեսին անկախութիւնից  
էլ թանգ ու լաւ բան չը կար շվեյցարացի-  
ների աչքում:

Տաներեքերրորդ դարում շվեյցարացիք ե-  
րեք առանձին գիւղ կամ թէ, նրանց լեզուով  
ասած, երեք կանտօն էին կազմում. այդ  
կանտօններն էին Շվից, Ուրի և Ունտեր-  
վալ'գեն, որոնց կառավարութիւնը, այդպէս  
ասուած, ընդհանուր խորհուրդի ձեռքին էր:  
Այդ ընդհանուր խորհուրդի համար շվեյցա-  
րացիք իրանց միջից ընտրում էին ամենա-  
պատուառը ու փորձառու մարդկերանց:

1273 թուականին Գերմանիայում, որը  
այն ժամանակուայ ամենամեծ տերութիւնն  
էր Եւրոպայում, թագաւոր նստեց Ռուդոլ'ֆ  
Հարսբուրգը: Այդ Ռուդոլ'ֆ թագաւորը Շլ-

վեյցարիայում շատ մեծ հողեր ուներ և  
հէնց նրա երեխայութեան օրերից շվեյցա-  
րացիք շատ սիրում էին նրան բարի լինե-  
լուն ու խաղաղ բնաւորութեան համար: Երբ  
նա թագաւոր դարձաւ, շվեյցարացիք իրանք  
իրանց յօժար կամքովը նրան իրանց գլխին  
հովանաւոր ընտրեցին, որ, բան է, մար-  
դասպանութիւն կամ թէ մի մեծ վէճ կամ  
կոիւ պատահած ժամանակ, կարողանան  
գնալ նրա մօտը, որ նա իրանց գործը քննի  
և արդար դատաստան անի: Իսկ իրանք ի-  
րանց մէջ կառավարուում էին էլի առաջուայ  
պէս՝ իրանց սովորութիւններին համեմատ:  
Միայն մի մեծ գործ պատահած ժամանակ,  
ինքը Ռուդոլ'ֆն էր գալիս Շվեյցարիա ու  
իր ձշմարիտ դատաստանը կատարում բոլոր  
ժողովուրդի առաջ՝ բաց երկնքի տակ: Այս  
ամենի փոխարէն էլ շվեյցարացիք խօսք տր-  
ուին, որ պատերազմ լինելուց գերմանա-  
ցոց տէրութեանը օգնութիւն հասցնեն. և  
իսկ որ նրանք իրանց սիրելի թագաւորի հա-  
մար իրանց արիւնը չէին խնայում: Ռուդոլ'  
ֆըն էլ իր կողմից՝ իր կուշտը եկած շվեյ-  
ցարացիների հետ այնպէս քաղցր, այնքան

լաւ էր վարւում, որ սկի չեղած։ Շվեյցարացիք իրանց համար ապրում էին սարերումը հանգիստ ու բաղդաւոր՝ առանց ոչ ոքի դիպչելու։

Բայց շատ չը քաշեց նրանց ազատութիւնը։ 1291 թուականին Բուգօնի՞ կայսրը մեռաւ և նրա տեղը գերմանացոց գահին նըստեց նրա որդի Ալ'բրեխտը։ Սա շատ ժլատ ու խստախրա, գոռոզ ու անմատչելի մարդ էր։ Նրան ոչ տեսնել էր լինում և ոչ էլ հետը խօսել։ Նրա ուշըն ու միտքը շատ հարստանանի ու շատ հոգեր խլել ու ձեռք դցելն էր միայն։ Ասպետները, որոնք Շվեյցարիայում հոգեր ունեին, ուզում էին շվեյցարացիներին էլ, ինչպէս Գերմանիայի միւս տեղերում, ճորտեր դարձնեն։ Հէնց այդ ասպետներն էին, որ Ալ'բրեխտին գրվխից հանեցին։ Նրանք պատմեցին նրան, թէ Շվեյցարացիք հպարտ, ինքնակամ ժողովուրդ են թէ նրանք գեղեցիկ տներ ու բազմաթիւ հօտեր ունեն և այլն։ Թագւորն էլ այս ամենը լսելուց յետոյ ցանկացաւ՝ որ, ինչ էլ որ ուզում է լինի, անպատճառ այդ հարուստ երկրը նուաճի՝ իր ձեռքի տակը դցի։ Նա

առաջ սպառնալիքներով ողահանջեց շվեյցարացիներից, որ նրանք իրանք-իրանց զան ու հպատակուին իրան։ Բայց շվեյցարացիք ոչ վախեցան նրանից և ոչ էլ եկան նրան խոնարհուելու։ Ալ'բրեխտը կատագեց զրա վրայ, Շվեյցարիա ուղարկեց իր երկու տէզակալին (լեանդրֆօխտ) Հէսոլեքին ու Լեանդրերգին և սրանց լիակատար իրաւանք արուեց որ, ինչ որ ուզում են, անեն, միայն թէ նուաճեն այդ ինքնակամ, իրասածի ազգը։ Տեղականները Շվեյցարիա հասան թէ չէ, իսկոյն սկսեցին սարսափելի, անսատելի բաներ անել։

Նրանք թոյլ չէին տալիս, որ շվեյցարացիք իրանց ապրանքները Շվեյցարիայից դուրս բերեն՝ ծախեն։ ուրիշ երկիրներից բերւող ապրանքներից հարկ էին առնում։ մի ամենաչնչին յանցանքի համար, իրբեւ տուգանք, փող էին վերցնում։ Ծանր էր, շատ էր ծանըր Շվեյցարացիների համար այս ամենը։ բայց ինչ արած, նրանք դեռ չէին մոռացել հանգուցեալ թագաւորի բարի բնաւորութիւնը, նրա արած լաւութիւնները և այդ էր պատճառը, որ ամեն ինչ կրում էին առանց տրտնջալու,

Բայց քանի գնում էր՝ նեղութիւնները այնքան շատանում ու աւելի խիստ էին դառնում: Ամեն տեղից օրեցօր աւելի վաս համբաւներ էր գալիս:

Մի օր, իրիկնադէմին, մի ձկնորս, մի հովիւ ու մի որսորդ, հաւաքուելով երեք կանտօնի լճի ափին, խօսում էին իրանց գործերից. հովիւը իր խաշներից էր խօսում, ձկնորսը ձկներից, իսկ որտորզը, ի հարկէ, իր սիրելի որսերից էր խօսում: Յանկարծ, հեկեկալով, նրանց մօտն է վազում շվեյցարացի՝ Կոնրադ Բառմգարտենը, արիւնի մէջ կորած:

«Ի սէր Աստուծոյ, ասում է նա ձկնորսին, ինձ անցկացրու միւս ափը. ինչ որ ուզում է լինի ինչ որ ուզում ես արա՞ միայն թէ ինձ ազատես...»

Տեղակալի պահապանները, Բառմգարտենի ետեւից ընկած, հալածում էին նրան, Նրա սպաններից մէկը, մի քանի զինւորների հետ, մտաւ խեղճի տունը, ինչ որ լաւ բան տեսաւ վերցրեց և, կարծես թէ այդքանը դեռ հերիք չէր՝ նրա կնոջն էլ խայտառակեց: Այս ամեն բռնութիւնները տեսնելուց յետոյ

Բառմգարտենը էլ չը կարողացաւ համբերել ու տեղնուածեղը սպանեց սպային Բայց, մինչև որ նա պատմում էր իր դարձը, սաստիկ փոթորիկ բարձրացաւ. ձկնորսը սիրտ չէր անում խեղճ մարդուն լժի միւս ափը անց կացնել: Նրա բաղդիցը հէնց այն րօպէին նրանց մօտ եկաւ Վիլհէլմ Տէլլ՛ը: Սա չը դիմացաւ Բառմգարտենի աղաչանք-պաղատանքներին ու ձկնորսին ասեց որ յետ անի կապած մակոյկը:

«Է՞ն, ինչ որ կը լինի՝ կը լինի, ասեց Տէլլ՛ը. յոյսներս դնենք Աստուծու կամքին. որքան ուժումս ոյժ կայ կը փորձեմ, Բառմգարտեն եղբայր. դատաւորների ձեռքից ես քեզ կազմաեմ, իսկ փոթորիկից թող Աստուծած ազատի: Դու էլ ձկնորս եղբայր, կնոջս կը միսիթարես, եթէ բան է, Աստուծած մի արասցէ, զիսիս մի փորձանք գալու լինի, նրան կասես որ ես արեցի այն՝ ինչ որ պարտաւոր է անելու ամեն մի քրիստոնեաց:»

Այս ասելուց յետոյ Տէլլ՛ն ու Բառմգարտենը մակոյկ նստեցին ու գնացին: Լիճը սաստիկ կատաղած էր, ալէկոծում էր ու մակոյկը տաշեղի նման այստեղից այնտեղ

էր զցում։ Բայց Տէլլը, որ թիավարելում այնպիսի լաւ վարպետ էր, կարողացաւ խեղճ մարդուն միւս ափը անց կացնել ու այդպիշտ առվ աղատել տեղակալի զինուորների ձեռքից։ Հէնց որ նրանք նաւակի մէջ նստած ափից մի քիչ հեռացան թէ չէ, իսկոյն եւ կան տեղակալի զինուորները ու, տեսնելով, որ բանը բանից արդէն անց է կացել, ճարները կտրած, ուղեցին իրանց վրէժը մէկից հանել. ցիրուցան արեցին խեղճ հովուի հօպերը ու կրակ տուին նրա աղքատիկ տուն ու տեղը։

Մաքի տունը ընկած, գլուխը քաշ զցած, նստած է իր նոր տան մօտ հարուստ շվեյցարացի Շատուֆախիերը։ Երէկի նրա տան մօտովը անց էր կենում տեղակալը. նա, նախանձը աչքերին, նայեց նոր շինութեանը ու ասեց. «օհօ, տեսէք, ինչպէս են տպրում տեղս շվեյցարացիք։ Իսկ որ թագաւորի ապրուստ է եղել սրանց ապրուստը։ Հէրմ, մի քիչ էլ սպասեցէք, շատ չի քաշիլ ձեր այս տեսակ ապրելը»։

«Վայ ինձ համար, տունս ձեռքից դուրս է դալու, տունմ էր ինքն իրան Շատուֆա-

խերը, ու այսպիսի ախուր ու գառն մտածմունքներից նրա գլուխը էլ աւելի էր քաշ ըսկնում, կարծես թէ, սրտին մի ծանր քար զցեցին։ Նրա խելօք կինը աղատեց նրան այդ ծանր ու ախուր մտքերից, ասելով. «Էլ ինչ ես գլուխդ քաշ զցել. ինչ տղամարդ ես. գործ կատարելու, բան աեսնելու փոխանակ, գլուխն է քաշ զցում։ Հը, փառք Աստուծու, խօ մենակ գնւ չես զգուած այդ անիրաւ տեղակալից։ միթէ բոլոր կանաօններում քիչ մարդ կայ նրա գէմ, նրանից դժգոհ, ինչ կը լինէր, որ ամենքդ հաւաքուէիք մի տեղ ու խելք խելքի տուած՝ միտք անէիք ու մի հնար զանէիք աղատուելու այդ անօրէն ու ծանր լուծից։ Բաս սկի չես լսել, որ մեր ծերերը ասում են».

Մէկ մարդի կոփւր կոփւ չէ,

Շատ մարդկանց կոփւր մահ չէ։

— «Ճշմարիտ որ, միտք արեց Շատուֆախերը, ամօթ ինձ համար. իմ կինս, թոյլ կընիկարմատ տեղովը ինձ խելքի է գնում. տես սկի խելքս կտրել է, ինչ տղամարդ եմ ես. կինս ինձանից համարձակ է, կուզես, ես տղամարդ եմ նա կնիկարմատ»։

Այս ասելով, նա վեր կացաւ նստած տեղից  
ու ձեռքը ճակատին քսելով՝ մտածում էր,  
թէ արդեօք ի՞նչ կը լինի իր ընտանիքի հալը՝  
եթէ գործը չը յաջողի։ Նա մտածում էր և  
տեսնում, որ այդ գէպքում իսկ որ շատ գառ-  
նութիւններ կը դայ իր գլխին և որ իր ըն-  
տանիքն էլ չի պրծնիլ այդ ցաւերից։ Շտա-  
ռֆախերը ինքն իրան ասում էր, «ապատե-  
րազմի», կուի ժամանակ ցիրուցան կը դառ-  
նան խաշները, շատ ու շատ հայրեր կը կո-  
տորուեն, քանի քանի աներ կը կործանուեն,  
հազարաւոր կանայք ու երեխաներ որբեայ-  
րի ու անօգնական կը մնան...»։ Բայց նրա  
կինը, Հերտրուդան, իզուր տեղից չէր լսել  
իր հօրից ին պատմութիւններ. նա գիտէր  
թէ ինչպէս են շվեյցարացիք կոխներ արել  
իրանց հարևան ազգերի հետ. նա լսել էր, որ  
իրանց պարագաները արիւնի ու ճակատի քրտին-  
քով էին ներկել ու պարարտացրել իրանց  
հողերը։

«Ի՞նչ անենք, այ մարդ, ի՞նչու ես այդ-  
պէս վախենում կուից ու աւերմունքից, ա-  
սում էր Հերտրուդան, վասս չը կայ. թող ձեզ  
կոտորեն. կարծես թէ մեզ, կենդանի մնա-

ցածներիա, համար էլ ուրիշ ճար չի լինիլ.  
խելքդ ում է գնացել. կարծում ես թէ մենք  
ձեզանից յետոյ իսկոյն կընկնենք թշնամիւ-  
ների ձեռքը, որ էլ բան չի մնայ որ մեր գլու-  
խը չը բերին. Զէ, այդ կողմից միամիտ կաց.  
մենք էլ մեր թոյլ տեղովը ազատուելու ճա-  
նապարհ կը գտնենք. վառք Աստուծու, ինչ  
կայ. Ժայռեր շատ կան. այս բարձր ժայռե-  
րից ինքներս մեզ կը զցենք անդունիները  
ու կը պրծնենք նրանց ձեռքից»։

Կնոջ այս վերջին խօսքերը շարժեցին Շտա-  
ռֆախերի սիրտը. կարծես, այդ խօսքերը ար-  
դամարգութիւն ու համարձակութիւն տուին  
նրան. Նա բարձրացրեց մինչև այն ժամանակ  
քաշ զցած գլուխը, գրկեց կնոջը ու ասեց նը-  
րան. «Զէ, ով որ մի այդպիսի քեզ նման սիրտ  
ունեցող կին ունի, նրա համար աշխարհիս ե-  
րեսին սարսափելի բան չկայ. նա վախ չունի,  
նա ուրախութեամբ կուր կը գնայ հայրենի  
հողի համար. քեզ նման կին ունեցողը չի խը-  
նայիլ իր թիկունքը հայրենիքի օգտին զոհե-  
լու. Դու տանը մնացիր, քո անտեսութիւնդ  
արա. միայն տես՝ աչքդ քեզ վրա պահիր, որ  
ամեն մի ուխտ գնացող օտարական, ամեն մի

վարդապետ, որը մեր տան շէմքովը կը մտնի  
հանգստանալու համար, առանց կուշտ կերա-  
կուրի չի մնայ, Ես զնում եմ կանտօները,  
որ ման գամ ու գտնեմ այսպիսի ընկերներ,  
որոնք հայրենի երկրի համար կարող են  
զոհել իրանց անձը»:

Հէսց այդ միջոցումն էր, որ աեղեկալը ըս-  
կեց մի բանդ շինել տալ Ալ'աղօրփում՝ ան-  
հնագանդ շվեյցարացիների համար։ Այդ շի-  
նութեան վրա ժողովուրդի մեծ բազութիւն  
էր բան անում, էլ ծեր, էլ կին, էլ երեխայ՝  
միենոյն էր նրանց համար, ովք էր հարցում  
թէ կարող ես բան անել, թէ ոչ. բոլորին  
էլ զօռով քշում էին դէպի այսակեղ և քար  
ու հող էին կրել տալիս, որ բանը շուտ գը-  
լուի գայ։ Յոդնածութիւնից ոտերը հազիւ-  
հազ քաշ տալով, խեղճ ժողովուրդը քար էր  
կրում հէնց իրան համար շինուելիս բանդի  
համար. իսկ վերակացուն, կոշտ ու կոպիս  
յիշոցներ տալով, բանեցնում էր բանւորնե-  
րին։ Յանկարծ, որաեղից էր որտեղից չէր  
մի գափի ձայն եկաւ. Զինւորների մի  
խումբ էր զալիս, որանք՝ հանգիստոր կեր-  
պով ձեռքներին բռնած մի երկար ձող, որի

33263  
ծայրին մի ինչոք զգակ էր զլած, ծանրու-  
մեծ քայլերով առողջ էին զալիս։ Ժողովուր-  
դի բազմութիւնը զարմացած ընկել էր զին-  
որների ետևից ու զնում և չէր հասկա-  
նում թէ սա ինչ նոր բան է հնարել տե-  
ղակալ Հէսոլերը։ Զինւորները այդ ձողը  
գետին տնկեցին, իսկ սպան բարձր ձայնով  
կարգաց Հէսոլերի հրամանը։ Նա (Հէսոլերը)  
ուղում է իմանալ թէ ով է իրան հնագանդ-  
ուում և ով չէ հնագանդուում. և զրա հա-  
մար էլ պահանջում է, որ իր զգակին էլ  
նոյն պատիւը աան, ինչ որ իրան են տալիս.  
Նա հրամայում է, որ զգակի մօտով ամեն  
մի անցուգարծ անող վերցնի իր զլարկը  
ու զլուխ տայ զգակին։ Իսկ ով որ այս հը-  
րամանը չը կատարի, նա կը զրկուի իր ա-  
զատութիւնից և ունեցած չունեցածից։

Ունտերվաղղեն կանտօնի բաներն էլ սրա-  
նից լու չեն. աեղակալի սպաներից մէկը  
եկել է ու քշել տարել ծեր Մելիսալի  
եղները։ Մելիսալի որդի Սլոնօլ'զը չը կու-  
րողացաւ դիմանալ այն անպիտոնի կողմից  
հասցրած վիրաւորսնքին. զօրս դու պատ-  
միրեցիր, մի լաւ ծեծեց նրան, իր ճիպոտը

նրա վրա կոտրատեց։ Հալածանքներից վախենալով ու կամենալով իր կեանքը փրկել իր ծերունի հօր համար, ինչպէս նրա մինուժարը, նա փախաւ՝ գնաց մի ուրիշ կանոն։ բայց առանց նրան մի անասելի բան պատահեց։ Տեղեկալը նրա հօրից պահանպատահեց։ Տեղեկալը նրա հօրից պահանպատահեց, որ նա իր որդու տեղը ասի։ Ծերը երգում կերաւ, որ ինքն էլ չը զիտէ թէ ինչտեղ է իր որդին, Արնոլ'դը, Այն ժամանակ այդ անաստուածը կանչել տուեց զահիճներին, հրամայեց որ խեղճ ալիսրին վցեն գեանին ու աչքերը հանեն, ասեցը զցեն գեանին ու աչքերը հանեն, ասեցւ. «Հը, լաւ. ասենք թէ որդիդ այստեղ չէ, դու խօ իմ ձեռքին եմ»։ Դեռ դա ոչինչ. կարծես թէ այդ քիչ էր նրան. խեղճին ինչ որ ունէր չունէր ձեռքից խեցին, և նա դուից գուռ ընկած, ողորմութիւն էր ինդում Աստուած սիրողներից։ Տեղակալի ձեռքից փախած ու թագ կացած որդին զարհուրանքով լաց այդ ախուր համբաւը, այդ օրուանից Արնոլ'դը վճռեց, որ ինչ էլ որ լինում է լինի, պիտի հօր վրէժը հանի։ «Տեսէք, հիմիկուանից ձեզ ասում եմ—ասեց նա Շտառուֆախերին որ Տեղի անհրո՞շ

Վալ'տեր Ֆիւրստին—եթէ դուք, ձեր տների ու հօտերի համար վախենաք ու տեղակալի առջև վիզ ծոէք, այն ժամանակ ես իսկոյն կը գնամ սարերը, կը հաւաքեմ բոլոր հովիւներին և նրանց կը պատմեմ այս բոլոր չարագործութիւնների մասին։ Միթէ մեզ երեխայութիւնից հէնց ի զուր տեղից են նետաձգութիւն սովորցել. միթէ կացին բոնելլ ի զուր ենք սովորել։ ասում էր երխասարդ Արնոլ'դը, աշխատելով համոզել ծերերին. «Էլ մենք ինչ մարդ ենք. անսառունը անասուն լինելով, Աստուած նըրան էլ պաշտպանելու գործիք է տուել։ Վատը հէնց մենք՝ մարդիքս ենք, որ կանք. մենակ մենք ենք, որ սպասում ենք մինչև որ ուրիշները գալիս են ու մեր աչքերը հանում»։

Քաջասիրտ երխասարդի խօսքերը ծերերին տեղահան արին. նրանք իսկոյն վճռեցին, առաջ մի զնալ ու խորհուրդ հարցնել այն հոդատէր բարօններից, որոնք միշտ ըրվեյցարացիների հետ լաւ էին վարւում և հարկաւոր եղած ժամանակ միշտ օգնութիւն էին հասցնում, իսկ յետոյ իմաց տալ

երեք կանտօնների բնակիչներին. որ ամեն մի կանտօնից տասը ընտրուած մարդ գիշերը հաւաքուեն սարերումը մի տեղ, որպէս զի խորհուրդ անեն՝ տեսնեն թէ ինչ են անում: Այս ինչ Շատուֆախերը ու Վալտեր ֆիւրսաը Շվից և Ուրի կանտօններումն էին մէկ մէկ հաւաքում հայրենիքի համար ցաւողներին, Արնօլդ Մելխոտալն էլ Ունտեր վալդենումն էր բանի կացել: Նա բարձրանում էր սարերը ու այնպիսի զիք տեղերով էր գնում, որ կարծես թէ կեանքից ձեռք էր վերցրել. ճանապարհին ոչ մարդ էր պատահում, ոչ կացարան. ծարաւելիս՝ սառոյցների ջրերիցն էր խմում: Վերջապէս, նա հասաւ Ալ'պեան հովիւնների աղքատ խրճիթները: Այս տեղերում արդէն լըսել էին տեղակալի արարմունքները և ամեն տեղ, ուր Մելխոտալը պատմում էր իր անբազդ հօր զիլին եկածը, նրան շատ սիրով և ուրախութեամբ էին ընդունում: Անկեղծ սրտով էին նրան «բարով հագար բարի եկար» ասում և, իրեւ աւստրիացինների տուած նեղութիւններին պատասխան, նրանք վեր էին բերում պատերից կախ արած ժամ-

գոտած սուրերը: Շվեյցարիայի ամեն մի անկիւնում, երբ Արնօլդը տալիս էր Շատուֆախերի ու Վալտր ֆեխերստի պէս պատուաւոր մարդկանց անունները, իսկոյն ամեն մի լսողի աչքերից քաջութեան կրակ էր թափւում. ամենքն էլ երգւում էին, որ կը կատարեն ամեն ինչ, ինչ որ նրանք ասեն, ինչ որ նրանք հրամայեն:

«Հայրենիքի համար ամեն ինչ կը զոհենք, թէկուզ մեր կեանքն անզամ» ասում էին նրանք:

Արնօլդը այդ կերպով, մի տնից միւս տունը մտնելով, տեսաւ ու խօսեց իր կանտօնի բոլոր զիւղացինների հետ և վերջապէս հասաւ իր հայրենի ձորը. այնահեղ էր նրա խեղճ հայրը. Կոյր ու աղքատութեան մէջ ընկած՝ նու պառկած էր գարմանի (յարդի) վրա, որը ուրիշները խղճալով, բերել ու փոել էին նրա տակին: Արնօլդը տեսաւ իր խեղճ հօրը, բայց լաց չեղաւ: Նա իր գարդը ցոյց չէր տալիս. որտի խորքերումն էր թագցրել իր ցաւերը. նրա միաքը միայն նու էր՝ թէ ի՞նչպէս անի, որ կարողանայ հայրենիքը օտարների ձեռքից ազատել: Էլ

տեղ չկար, որ նա եղած չը լինէր. էլ սարերի կիրճեր, էլ խոր ու մոռթ ձորեր չը թողեց՝ ամեն տեղ էլ մտաւ ու ամեն տեղ էլ ժողովրդին ապստամբութեան յորդորեց: Դեռ այս բոլորը ոչինչ. նա վարդապետի շորեր հազած, ներս պըծաւ աւստրիացիների երկու ամենապինդ բերդերը ու ինքը իր աչքովը տեսաւ ու տեղեկացաւ նրանց զօրութեան մասին: Ահա այդպէս, իր կեանքը միշտ վտանգի ենթարկելով, այս երիտասարդը մի երկու շաբաթում ամեն ինչ կարողացաւ պատրաստել մինչև այն օրը, երբոր երեք կանտօնների դրած ժամանակին, վերջին անգամ ընդհանուր խորհորդ անելու համար, ամենքն էլ մի տեղ պիտի հաւաքուէին: Վերջապէս այդ օրն էլ հասաւ:

Լուս ու հանդարա զիշեր է, Սնտառուապատ բարձր ժայռերը, սնքերնին կախ զրցած, նայում էին դէպի Ռիւալիի ձորը: Հեռուից երեսում է Ֆիրվալ'զշապի լիճը, այսաեղ նրա մօտ խառնուում էն միասին երեք կանտօնների սահմանները: Լուսնկայ զիշեր է, լուսնի պայծառ լուսից սառոյց ները պսպղում են հազար ու մի փայլով.

Նոյնպէս պայծառ են փայլում տարին տառներկու ամիս ձիւնով ծածկուած սարերի ահազին շղթաները: Ահա այն սարի նեղ ու կեռումեռ կածաններովը վեր են գալիս դէպի քաշ մի տասը հոգի հասարակ զիւղացիներ. սրանք Ունտերվալ'դեն կանտօնի ընտրուած մարդիքն են: Ամենից առաջ գնումէ Արնոլ'դ Մելխոտալ'ը. այս խեղճ հովիւները, տուն ու տեղը թողած՝ ով զիսէ թէ ինչ հեռու տեղերից, վեր են կացել՝ եկել խորհուրդ անելու ու իրանց գլխի ճարը տեսնելու: Դրանցից երկուսը իրար հետ չունեն, մէկ մէկու հետ այդ երկուսը թշնամի են ու ահա քանի տարի է, որ մի կտոր անպէտք հողի համար իրար միս են ուտում. բայց ինչ կանես, որ հիմա զիւղանք ամեն ինչ մոռացել են, ու իրանց թշնամութիւնը մի կողմը դրած, իրար ձեռքից բռնած, զընում են դէպի ներքի: Ամենից շուտ տեղ հասան Ունտերվալ'դեն կանտօնին մարդիկը. նրանք իսկոյն ձորի միջին կրակ վառեցին ու, կրակի չորս կողմը նստուելով, սկսեցին մասցածներին սպասել: Բայց գա էլ չի երկար շատ քաշեց. միւս կանտօնցիներն էլ

շուտ եկան. Լճի ելեսին մի մակրյկ երևաց, նրա միջին նստած է Շտառուֆախերը՝ Շվեյցի տասը լնտրուած մարդկերանց հետ. Դեռ ափը չը հասած, նրանք գոռալով բարեկում են Ունտերվալ'զենից եկածներին. Ահա նրանք էլ տեղ հասան ու գուրս եկան մակրյկից. ամենքն էլ զինուորուած են աղեղներով, նետերով, ու հին, իրանց պապկրից մնացած, սուրերով։ Նրանք եղբայրաբար, ուրախ ուրախ բարեկում են ու ձեռք տալիս իրանցից շուտ եկած Ունտերվալ'զենցիներին. թէ իրար առաջին անգամն էին աեսնում, բայց այնպէս սիրով էին իրար հետ խօսում, որ աեսնողը հէնց կիմանար, թէ սրանք վագուց են մէկզմէկու ճանաշում։ Մրանք ամենքըն էլ իրար հետ մի սիրով ու մի ցանկութեամբ էին կապված. բոլորն էլ մի սիրով էին սիրում իրանց հայրենի սարերը, ամենքըն էլ մի ցանկութիւն ունէին՝ պաշտպանել թշնամիներից իրացն կանսաց ու երեխաներին։ Ահա մնացածներն էլ եկան. բարձրում՝ ժայռերի վրա երեացին նրանք, զրահաւորուած, ջահերը ձեռքները առած, լուսաւորելով իրանց խոր ու մութ տեղերով

ընկած ճանապարհը, գալիս են նրանք դէպի ներքեւ. Սրանք էլ Ուրի կանտօնի ընտրուածներն են. նրանց առաջնորդում է Տէլլի ծելլի ծերունի աներ՝ Վալ'տեր Ֆիւրստը. Դըրանց հետն է և զառամեալ, ուժից ընկած քահանան, գաւազանը գետին դէմ տարով, տմբամբալով, գալիս է նրանց հետ. բայց երեկում է, որ շատ յոգնած է, որովհետեւ ուները զոռով է փոխում։ Զը նայած գիշեր ժամանակին ու ճանապարհի գժուարութեանը, նա՝ իրեւ հաւատարիմ հովիւ, չի ուզում անտէր թողնի իր հօտը։ Մենակ քաջ որսորդ Վիլհէլմ Տէլլի է պակաս այստեղ։ Շտառուֆախերը նրան էլ էր կանչել այստեղ՝ Ռիւտի, բայց որսորդը, նրա ձեռքը սեղմելով, ասել էր.

«Ինձ ասելիք ի՞նչ հարկաւոր է, միթէ Տէլլլը վասնգի ժամանակ մենակ կը թողնի իր ընկերներին. այն Տէլլը՝ որը պրծացնում է գանձ անդունդ գլորուելուց։ Ինձ խորհրդի միք կանչիլ. ախր ես գատարկ խօսքով ի՞նչ օգնութիւն պիտի հասցնեմ ձեզ է. չէ, խորհուրդը ու խօսքերը իմ բանա չէ իմը այս է»։ այս ասելով, նա մեկնեց իր աղա-

մարդի ձեռքերը: «Երբ բազուկներս ձեզ  
հարկաւոր կը գտն, այն ժամանակ բաւա-  
կան է, որ մի խօսք ասէք. մէկ էլ կը տես-  
նէք, որ Տէլլը ձեր կողքին կանգնած է»:

Տէլլը սուտ ասելը չըդիտէ: Այս սարե-  
րումը ամենքն էլ նրան լաւ են ճանաչում. բո-  
լորն էլ զիտեն, թէ այս քիչ խօսող, միշտ  
ունքերը վրա տուած մարդը ինչ մարդ է.  
պատճառն էլ հէնց այդ է, որ ոչ ոք չի զար-  
մանում, թէ ինչու նա տեղո՞ւ Իրւալիի ձո-  
րումը չէ:

Էլ մարդ չունեն սպասելու. Վալտեր  
Ֆիւրստն էր որ եկաւ. և ահա երեք կան-  
տօնի՝ Ռւրի, Շվիցի և Ռւնտերվալդենի ըն-  
արուածները, թուով երեսունուերեք հոգի,  
վեր կացան ու շրջանաձև կանգնեցին: Շե-  
րունի տէրտէրը հրամայեց, որ բոլորեքեանն  
էլ տափը խրեն իրանց սուրերը և մի «ամ-  
ման» կամ խորհուրդի կարգադրիչ ջոկեն ի-  
րանց միջից: Առաջ մէկ ընտրեցին Շտառու-  
ֆախերին, բայց նա չկամեցաւ որ ինքը լի-  
նի զլաւորը և ցոյց տուեց իննուուն  
ատարեկան ծերունի Բեդինգին, որովհետե-  
նա էր իրանց միջին ամենից տարիքաւորը:

Եւ ահա այս մութնուգիշերին, բայց երկնա-  
կամարի տակ, Ռիւտլիի ձորի միջին սկսուեց  
խորհուրդը: Այս այն խորհուրդն էր, որի  
վրա շվեյցարացիք երգեր են կապել և այդ  
երգերը մինչև օրս էլ նրանք երգում են:

Մի քանի խօսքով Շտառուֆախերը պատ-  
մեց, թէ ինչպէս մի ժամանակ իրանց պա-  
պերը եկել են ոյս երկիրը:

«Նրանք իրանց ձեռքով մշակել են այս  
աղքատ հոգերը. նրանք իրար հետ մի ա-  
րինով էին կապուած ու մի հայրենիք էր  
նրանց սնունդ ու կերակուր տուել և մեծա-  
ցել: Այն ինչ, ուրիշ ազգերը, յաղթուելուն  
պէս, հնագանդուում ու ընդունում էին յաղ-  
թողների իշխանութիւնը, շվեյցարացիք պինդ  
էին պահում իրանց անկախութիւնը. նրանք  
միայն իրանց յօժար կամքովը մտան գեր-  
մանացոց թագաւորի ձեռքի տակը: Մի  
անգամ չէ, երկու անգամ չէ, որ նրանք  
գերմանացիների համար արիւն են թափել.  
բայց տեսէք, թէ փոխարէնը ինչպէս են  
հատուցանում նրանք. էլ խաշների հօտեր չի  
մնացել, որ տարած չլինեն էլ անտէր ու ան-  
պաշտպան մնացած ծերեր, էլ կանայք, էլ

Երեխայք, բողոքին էլ չարչարում ունետանջում: Երբ մարդ տեսնում է, որ աշխարհում էլ արդարութիւն չի մնացել, ասում էր Շտառվախերը, երբ դանակը ոսկրին է համում, երբ համբերութիւն ասածդ կեանք չէ այլ ևս, այլ մահ է, այն ժամանակ մարդ պիտի Աստուծուն ազօթք անի ու թողութիւն խնդրի և ողորմած Աստուածը թողութիւն կը չուղի այն արիւնի համար, որը այդ մարդը թափում էր իր աղքատիկ ու չեցած-չունեցածի, քաղցր ու սիրելի հայրենիքի, կնոջ և զաւակի պաշտպանութեան համար»:

Շտառվախերի ասած խօսքերը ամենքի վրա մեծ ազդեցութիւն ունեցան: Բոլորն էլ այնպէս վառուեցին, որ ամեն մարդ էլ ձեռքը տարաւ իր սուրբ, ամեն մէկն էլ պատրաստ էր հէնց այն բովէին գնալ՝ յարձակուել թշնամու վրա ու հանել իր սրտի վրէժը, բայց տէր հայրը հանգստացրեց նրան ասելով.

«Որպիքս, աւելի լաւ կը լինի, որ գործը պաղաղութեամբ վերջացնենք, եթէ կարելի է: Է՞ն, դեռ ով է իմանում, կարելի է սկզ Ալբերխ թագաւորը չը զիտէ էլ, որ մեզ

այսքան նեղացնում են. առաջ, եկէք մի գանգաս ուղարկենք նրան. կը տեսնենք, եթէ դարդներս դարման չեղաւ, այն ժամանակը մենք ինքներս մեր զլիսի ճարը կը տեսնենք. միայն մենք լինենք սաղ ու մեր զէնքերը ոչ պակաս»:

Բայց Շվից կանտօնի զիւղացիներից մէկը, որին արգէն մի անգամ կանտօնի կողմից ուղարկել էին թագաւորի մօտ, ասեց, որ իրան չթողեցին էլ, որ Ալբերխատի երեսը տեսնի և հէնց ինքը թագաւորը հրամայել էր՝ թէ «այն զիւղացուն ասեցէք, որ ես շվիցարացիներին երբ և իցէ մի ուրիշ ժամանակ կը մտաբերեմ»:

«Եւ, վերջապէս, Ալբերխատից լինչ լաւ բան պիտի սպասենք, ասում էր զիւղացին. միթէ դա այն Ալբերխը չէ, որ անիրաւութեամբ ու առանց մի պատճառի կոիւներ է զցում անդադար իր հարեւանների հետ, որ ինչ է զօռով ուրիշի հողերը ու հարստութիւնները իր ձեռքը զցի»:

Դրանից յետոյ առաջ եկաւ Ուրի կանտօնցի ծերունի Վալտեր Ֆիւրսուը:

«Եղբայրներս ու բարեկամներս, — սկսեց

նա—իմացած լինէք, որ մենք նոր նոր շահերի ետևից չենք ընկնում. մենք միայն ուզում ենք ազատուել մեր վզին գրած ծանր լուծից, որի երեսը մեր պապերը տեսած էլ չեն եղել. Ուզում ենք, որ մեզ հանգիստ թողնեն. չը նեղացնեն, չը դիպչեն ոչ մեր հոգերին, ոչ էլ մեր կանանց ու երեխաներին. Ուզում ենք, որ մեզ չը վիրաւորեն, մեզ համար բանդեր չը շինեն. մեզ թողնեն, որ ապրենք այնպէս՝ ինչպէս որ ապրել ենք մինչև օրս հարիւրաւոր տարիներ՝ հանգիստ, մեր հալալ աշխատանքով: Էլի առաջուայ պէս, ինչպէս որ հարկն է, պատիւ կը տանք Ալբրեխտախն՝ ինչպէս թագաւոր մարդու. եղբայր, ով որ հոգի հարկ է տալիս, թող սրանից յետոյ էլ ազնիւ կերպով տայ, ինչպէս որ առաջ էր տալիս: Կանենք այն՝ ինչ որ հարկաւորն է, ինչ որ մեր պարտքն է. էլ գրանից աւել անելը հարկաւոր չէ: Մենք միայն ուզում ենք վոնդել տեղականերին ու նրանց ամրոցները քարուքանդ անել և եթէ կարելի կը լինի՝ այս բանը կանենք առանց կուի, առանց արիւնի. հարկաւոր չէ ի զուր տեղից արիւն թափելը. Թող մեր

թագաւորը տեսնի ու իմանայ որ այդ բանում մենք չունենք. մենք զէնքի ենք դիմում, որովհետեւ մինչև այդ տեղն են հասցըել մեզ»,

Այդպէս շվեյցարացիք իրանց մէջ շատ երկար խօսեցին ու վճռեցին, որ սպասեն մինչև ջրօրհնէքը. ասում էին, որ այն ժամանակ տեղակալի բերդը մտնելը հեշտ կը լինի. որովհետեւ կը կարծեն, թէ մենք էլ ենք ընծայ բերողներից. մեր գժուարը բերդ մտնեն է. մտանք թէ չէ բերդը, իմացէք՝ որ մերն է. համ էլ սրա լաւը նա է, որ մինչ որ մերն է. առաջ էլ առաջ կարող ենք զէնքերի պէս որ օրով տոաջ կարող ենք զէնքերի պատրաստութիւն տեսնել, որ բերդը մտնեպատրաստութիւն տեսնել, որ բերդը մտնելուց յետոյ պաշարի պակասութիւն չը լինի մեր բերդը մտնելուն պէս՝ իսկոյն սարեմեր կրակներ կը վառեն. այդ՝ ընդհանուր բումը կրակներ կը վառեն. այդ՝ ընդհանուր վուր կրակներ կը լինի. ով գիտէ, ապստամբութեան նշանը կը լինի. ով գիտէ, կարելի է, երբ աւատրիացիք տեսնեն, որ ամբողջ երկերը իրանց դէմ է վեր կացել՝ հէնց իրանք ուզենան բանը խաղաղութեամբ վերջացնելու: Ահա թէ ինչէր էին խօսում շվեյցարացիք:

Մինչև որ դրանք այսպէս խորհուրդ էլն անում, արել քիչ քիչ ընկաւ սարերի զլուխները։ Ամենքն էլ ակամայ գդակները վեր տռեցին ու սկսեցին աղօթք անել իրանց գործի աջողութեան համար։ Քահանան բորին օրհնեց ու ասեց.

«Սիրելի որդիներս. հէնց հիմա, այս սուրբ լուսարացին՝ երբ մեր այս ձորերումը տմենքն էլ դեռ քնած են, եկէք երգումով հաստատենք մեր խօսքն ու դաշինքը։ Այս բօպէից յետոյ եղայրանանք ու երգուենք, որ մեզանից ոչոք իր միւս ընկերին մենակ չկ թոգնիլ ոչ դժուար ընկած տեղը, ոչ փորձանքի և ոչ էլ դառնութիւն ժամանակ Ազնա լինենք, ինչպէս որ ազատ են եղել մեր պապերը. լաւ է մեռնենք, քան թէ մեր տռւն ու տեղը, մեր ընտանիքները գերութեան մէջ թողնենք։ Յոյժներս գնենք Առտուծու վրա ու մարդկային զօրութիւնից չը վախենանք. այն ժամանակ թող ինչ որ լինում է՝ լինի»։

Իրանց հին սովորութեան համեմատ, ամենքն էլ, խորհրդաւոր կերպով երեք ժամաները գէպի երկնք բարձրացրած, կըր-

կնեցին երգումի խօսքերը ու եղայրաբար մէկզմէկու համբուրեցին։ Ամեն մէկն էլ մի տեսակ փոխվել էր, կամ թէ՝ ինչպէս ասում են, շարժված էր. ինչպէս երկում էր, ով ինչ որ այստեղ տեսել ու լսել էր ի գուր չէր անցել նրա համար։ Նրանք իշրար հաստատ խօսք տուին, որ լուսթեամբ ընկերներ հաւաքեն ընդհանուր գործի համար. դրանից յետոյ շվեյցարացիք կամաց կամաց ցըխւ եկան. ամեն մարդ զնաց իրանց տուն։ Իսկ արեգակը իր պայծառ լոյսը արդէն տարածել էր ձիւնապատ սարերի գագաթների ու սառների վրա. նա լուսաւորել էր նոյնպէս այն մարդկանց ճանապարհները, որոնք դրանից մի քիչ առաջ զաշն էին կապել միասին ապրելու կամ միասին մեռնելու իրանց հայրենիքի համար։ Վիլհէլմ Տէլլի կինը՝ Հեղվիգան իմացու, որ Ռիւտիլում խորհուրդ կայ՝ վախեցաւ, որ չը լինի թէ տեղակալի գէմ գաւազբութիւն լինի ու իր մարդուն էլ խառնեն այդ բանի մէջ։ Այդ Հեղվիգան թէ առողջութեամբ և թէ սրտով թոյլ մի կին էր, ամբողջապէս իր ընտանիքի և տան գործերովն էր լինում

զբաղված. Երբ Տէլլը գնում էր որսի, այդ խեղճ կնիկը վախը սրտից չէր գցում ու մինչև նրա տուն գալը, սպասելուց աշքը ջուր էր կտրում. իսկ երբոր մարդը տուն էր վալիս ու պատմում, թէ ինչ տեղեր է եղել՝ Հեղվիզան սարսափելով էր լսում նրա սարերում արած անվախ քաջագործութիւնները։ Ամեն անգամ, երբ Տէլլը տանից դուրս էր վալիս Հեղվիզային այնպէս էր թւում, թէ նա՝ Տէլլը ճանապարհը կորցրել է սամների միջին. մէկ էլ հէնց էր, թէ ոսն է դուրս պրծնում ու նա բարձր ժայռերի գլխից անդունդն է գլորվում, իսկ նրա ետեից ահազին քարեր են թափվում ու նրան իրանց տակով անում։

Մօր սիրունեղանում էր, երբ տեսնում էր որ Տէլլը իր փոքրիկ երախաններին նետ գցելն էր սովորցնում. այդ բովէներում խեղջի սրտին վախութիւնից խոկյն ջուր էր մաղվում, երբ մտածում էր որ նրանք էլ մի օր իրանց հօր նման, կեանքից ձեռք վերցրած, ուրախ ուրախ ընկնելու են այդ վտանգաւոր տեղերը։ Իիւլիի խորհուրդը Հեղվիզան իր համար դարդ էր շինել. ինչ որ էլ ա-

նում՝ էր չէր անում՝ այդ բանը չէր կարողանում մոռանալ։ Անդադար գնում էր, գալիս ու Տէլլին հարցուփորձ անում նրանց դաւադրութեան մասին. աղաչում, պաղատում էր, որ նա այդ բանին չը խառնի, ասելով, որ նրա կեանքը հարկաւոր է իր կնոջ ու երախանների համար, որ իրանք խեղճ են, որ առանց նրան իրանք անտէր ու անօգնական կը մնան. բայց ում էր ասում, ով էր լսողը։

«Զէ, ես կարող չեմ ընկերներիցո բաժանվել, չէ. ոչ կարող եմ, ոչ էլ ուզում եմ», ասում էր Տէլլը։

Հէնց այդ խօսելու միջոցին էր, որ յանկարծ Տէլլը վեր կացաւ և գնաց Ալ'ադօրֆ Հեղվիզայի հօր՝ Վալ'տեր Ֆիւրստին տեսնելու։ Հեղվիզան իմանում էր, որ տեղակալ Հէսոլերը հիմա այնտեղ է. այն էլ գիտեր, որ նա չի սիրում իր մարդուն, ուստի սկսեց նրան ինդրել որ այսօր Ալ'ադօրֆ չը գնայ։

Իսկ Տէլլը ոչ թէ մենակ կնոջ խօսքը չը լսեց, այլ և իր պատիկ որդուն՝ Վալ'տերին էլ իր հետը տարտւ, ասելով, որ պատի

մօտն է տանում: Հեգվիրգան, վախութիւնից սրամածաք եղած, մնաց տանը մենակ իր ամենափոքր երեխայի հետ. խեղճ մայրը աչքերը դցել էր իր մարդու ու երեխայի քամակից, որոնք քանի գնում՝ այնքան հեռանում էին, վերջապէս, նրանք բոլորսկին հեռացան ու այլ ևս չերեւացին:

Ալտօրֆի հրապարակում երեւմ է մի ձող՝ Հեսալերի գրակը ծայրին: Զողի կողքին երկու զինուոր է կանգնած. գրանց հրամայել են, որ մատիկ տան, որպէս զի այդ տեղով եկող գնացողը զլուխ տայ գրակին: Զինուորներն էլ են մնացել շուարած. իզուր տեղից են նրանք առաւօտից մինչե երեկոյ կանգնած սպասում. ոչ ոք էլ չի ուզում զլուխ տայ գրակին. զիսամամբ, ամենքն էլ ուրիշ ճանապարհով են գնում, որ ինչ է գրակի մօտով չանցնեն: Բայց ահա երեաց վիճելմ Տէլլ. նա հէնց այդ ճանապարհով էր զալիս: Նրա գլնքը մի աղեղ է, որից նա երբէք չի բաժանվում. իր փոքրիկ Վալտերի ձեռքից բոնած, զալիս է ու պատմում է նրան, թէ իրանց Շվեյցարից բացի սարերի քամակին ուրիշ շատ

ու շատ երկիրներ էլ կան: Այդպէս ճայր ու որդի, զրոյց անելով, իրանց համար միաւմիտ գալիս են մօտենում զդակին. ոտնրանց աչքովը չի բնկնում, ուզում են նրա մօտով անց կենալ, առանց իմանալու թէ բանը ինչումն է, բայց մէկ էլ տեղուում են, որ մի ինչոր զինուոր հրացանի նիզակով կտրում է նրանց ճանապարհը ու հրամայումն է, որ Տէլլը գլուխ տայ գրակին: Տէլլը զինուորի ասածը չուզեց կատարել բայց զինուորը ասեց, որ այդ անհնագանգութեան համար կը զցեն բանդը: Բանդի անունը լսելուն պէս, փոքրիկ Վալտերը լաց եղաւ ու սկսեց օգնութիւն կանչել: Երեխայի Ճայնից հրապարակը հաւաքվեցին մի քանի զիւղացիներ, որոնք այդ ժամանակ այդտեղից մօտ ճանապարհով անց էին կենում. Վալտեր Թիւրստն էլ էր նրանց հետ: Խեղճ երեխան իր պապին տեսաւ թէ չէ, իսկոյն աչքերը արտասունքով լցւած վագեց նրա մօտը, ինզրելով, որ նա չը թողնի որ իր հայրիկին բանդը զցեն: Թիւրստը հիմա ճառկացաւ թէ բանը ինչ աղե է: Նառող եց իր վեռայի տեղ երաշխաւոր լինել, բայց զիւ-

նուորները իրանց ասածին էին. Նրանք իրանց էշն էին քշում, ու սկսեցին Տէլին կապուտել, որ տանեն բանդը զցեն: Բայց քանի գնում էր՝ այնքան հրապարակը լցվում էր աղաղակի վրայ եկած ժողովուրդով, որով տեսն այդ լուրը ամեն տեղ հասել էր: Այդ անսանելի ու չը տեսնված բանութիւնը վրդովեց զիւղացիներին. Նրանք վճռեցին Տէլին ձեռքից չը թողնել և քիչ էր մնացել, որ թափվէին զինուորների վրա: Բայց հէնց այդ բռպէին որսկանների փողերի ձայներ եկան. «տեղակալը գալիս է, տեղակալը գալիս է»—լսելի եղաւ ժողովուրդի միջից: Զինուորները հէնց որ այդ լսեցին, սկսեցին առաջվանից աւելի գոռալ, «դաւաճանութիւն է սա. ապստամբութիւն է սա. ընդդիմութիւն է»: Հէնց այս խօսքումն էր, որ անտառից երևաց Հէսոլերը՝ ձի նստած. Նա բազէով թոշուն որսալու էր գնացել և հիմա իր զինուորված մարդկերանցով վերադաշնում էր որսից:

«Դէ, հըմ. ճանապարհ տուէք, յետ քաշվեցէք. ճանապարհից ունդ (կորէք). զէ, շնուտ. այս ասելուց յետոյ նա զինուորնե-

րին հարցրեց, թէ «ի՞նչ կայ, որ այսպէս հաւաքվել են»: Զինուորներից մէկը մատով ցոյց տուեց գէպի Տէլլ ու ասեց Հէսոլերին. «Այ աղա, տեսնում ես, մեղաւորը այս բանուգործը կտրված յիմարն է. սա է այս զալմաղալի պատճառը. չի ուզում թէ գդակին գլուխ տայ, զրա համար էլ ես ուզում եմ տանեմ բանդը զցեմ, բայց ժողովուրդը չի թողնում»:

Երեսը մոռայլած նա լսեց այս խօսքերը ու մի քիչ լուս կենալուց յետոյ գարձաւ գէպի Տէլլ այս խօսքերով.

«Միթէ դու այնքան քիչ ես յարգում թագաւորին և ինձ՝ նրա փոխանորդին, որ չես ուզեցել պատիւ տալ այս գգակին, որը հէնց նրա համար է կախ տուած, որ իմանան թէ ով է ննազանդ կամ ով չէ ննազանդ: Առաջի մարդը զու ես, որ իմ հրամանը չես կատարում»:

«Աղա, բաշխիր ինձ այս անգամ, չիմանալով եմ մեղք արել: Քո հրամանը չը կատարելը, որ ասես, մտքովս էլ չի անցել»: Հէսոլերը մի քիչ լսեց ու յետոյ ասեց:

«Տէլլ, ճշմարիտ է այն, որ ասում են,

թէ նետ զցելում գուշ վարպետ ես. ասում  
են, այդ բանում քեզ հաւասար մարդ չկայ  
և որ դու այս կողմերում առաջինն ես»:  
Մինչև հօրը բերան բաց անելլը, որդին՝  
Վալ'աերը նրա տեղ պատասխանեց, անելով.  
— «Այս այս, աղա, ճշմարիտ է, իմ հայրս  
հարիւր քայլում, ինչ խնձոր որ ասես, նե-  
տով ծառից կը կարի ու վէր զցի»:  
— «Զը լինի թէ սա քո որդին է», հարց-  
րեց Հէսսլէրը Տէլլին:  
— «Ելո, աղա»:  
— «Ել ունես, թէ սա է»:  
— «Ո՞չ, աղա, երկուսն է»:  
— «Երկուսից որին ես շատ սիրում»:  
— «Աղա, երկուսին էլ մէկ եմ սիրում»:  
— «Դէ, որ այդպէս է, լաւ. Եթէ դորդ  
են ասում, որ դու նետով խնձորը ծառից  
կարում ես՝ վէր զցում, դէ, մէկ հսարդ  
ցայց տուր մեղ. քո որդու զլիսիցը խնձորը  
նետովդ թնդրնւ. Բայց անս, հիմիկանից  
ասում եմ հա լաւ պատղիր, եթէ խնձորը մի  
անգամից չը թոցրիր, բաս իմացած լինես,  
որ զլուխդ թոցնել կը տամ»:  
Ժողովուրդը ահուգողի մէջ ընկառ այս

սարսափելի հրամանը լսելուց և մի ձայն  
անգամ չը հանեց. Խեղճ հայրը ի զուր տե-  
ղից էր ազաշում ու պազատում Հէսսլէրին:  
«Ազատիր ինձ դրանից, Աստուած սիրես,  
թող որդեսպան չը գառնամ. միթէ ես իմ  
ձեռքովս իմ հարազատ որդու արիւնը պիտի  
թափեմ»: ասում էր Տէլլը. Եւ իսկ բաւա-  
կան էր որ ձեռքը մի քիչ դողուղար՝ իր որ-  
դուն սպանած պրծած կրվնէր. Բայց Հէսս-  
լէրը նրան ականջ չէր զնսում. նա ան-  
ողորմ էր, սիրալ քար էր կտրել:  
«Ասում են, որ դու անսովոր բաներ ես  
սիրում» պատասխանեց նա. «ասում են,  
որ դու մի ուրիշ տեսակ մարդ ես. քո  
ապրելու մատածելու էլ է մի ուրիշ տեսակ.  
Նենց զրա համար էլ կս մի անսովոր քաջա-  
զործութիւն ջոկեցի քեզ համար»: Ամենքն  
էլ մնացել էին զարմացած ու չգիտէին, թէ  
տեղակալը հանձք է անում, թէ իսկն է  
ասում: Բայց նա (տեղակալը) իր կողքի  
ծառից մի խնձոր կարեց, ու դամնալով  
հրապարակում հաւաքփած բազմութեանը,  
գոռաց. «Նը, դէ, այ ժողովուրդ, դէն կա-  
ցէք, աեղ տուեցէք: Ութուն քայլ չափե-

ցէք: Հը, տես, հա, ծուռ չը խփես», ասեց  
նա Տէլին: Իմ ձեռքիս ես դու, եթէ ուզե-  
նամ, կարող եմ քեզ սպանել տալ իսկ դրա  
փոխարէն քո վիճակդ քեզ եմ յանձնում.  
քո ձեռքիդ է՝ ապրելդ էլ, մեռնելդ էլ. թէ  
կարողացար սիրադ ու ձեռքերդ պինդ պա-  
նել, այն ժամանակ՝ խօսք չկայ, կասեմ լաւ  
նետ գցող ես»:

Ոչ Հէսալերի թիկնապահների խնդրելը, որ  
նա իր անողորմ հրամանը փոխի, ոչ Վալ’  
տեր Թիւրստի նրա առջե չոքել ու աղաչելը.  
ոչինչ էլ չօգնեց, բոլորն էլ ի զուր էր:  
Հէսալերը՝ կարծես թէ, խուլ էր, ոչ ոքի չէր  
լուս: Փոքրիկ Վալ’տերը մօտեցաւ իր գետ-  
նին չոքած պալին, ասելով.

«Վեր կաց, վեր, պապի, ինչ ես չոքել  
այդ քարասիրտ մարդու առջե: Դարդ մի  
անիլ, դու ասիր, տեսնեմ, ես մրտեղ կան-  
գնեմ: Գիտես թէ վախենում եմ, չեմ վա-  
խենում: Հայրիկիս նետը ինձ չի դիպշիլ,  
նա այնպիսի նետ գցող է, որ թոշելու ժա-  
մանակ էլ է թոշուն վէր գցում».

Հէսալերը հրամայեց, որ Վալ’տերին ծա-  
ռից կապեն. բայց նա իր մօտ եկած զի-

նուորին աղամարդի պէս զրոհ տուեց ու չը  
թողեց որ կապի, ասելով.  
«Ի՞նչ ես անուամ, ուզում ես ինձ կապէլ,  
պէտքը չէ, չեմ ուզում. առանց այդ էլ ես  
ոչ շունչ կը քաշեմ, ոչ էլ տեղիցս կը շարժ-  
վեմ: Իսկ եթէ կապէք, ես համ կը զուամ,  
համ ոտներս գետնին կը խփեմ, մի խօսքով,  
տեղս հանգիստ չեմ մնալ»:

Ճարները կարած, ուզեցին, գոնէ, աչքերը  
կատպաեն. բայց երախան դա էլ չը թողեց  
որ անեն.

«Ի՞նչ է, հէնց էք իմանում, թէ իմ հայ-  
րիկի նետիցն եմ վախենում, ասեց Վալ’-  
տերը: Միամիտ կացէք, աչքս էլ չեմ ճպիլ:  
Հայրիկ, սա չի հաւատում, մի ցնյց տուր է  
ցնյց տուր, որ դու լաւ նետ գցող ես. այս  
անիրաւը մեր գլխին ուզում է փորձանք  
բերի: Նէնց սրա հակառակը՝ նետդ գցիր ու  
ինձորը դլխիցս մի լաւ թոցըրու: Այս խօս-  
քերը ասելով, նա արձակ համարձակ գնաց  
զէպի ծառը. ինձորը դրեցին նրա զլիին:  
Բազմութիւնը լուռ ու սարսափով նայում  
էր սրան:

«Հը, ինչպէս ես. ինձ համար կարծես

թէ աղա է, առեց Հէսսլերը Տէլին, մի քիչ  
սպասելուց յետոյ. ամեն ժամանակ զինուորա-  
ված, դու ինքդ ձորտ, բայց նետք միշտ  
ձեռքիդ, մի բովէ էլ նետդ ձեռքիցդ չես  
տալիս. այ, հիմա քեզ համար լաւ նշանակ.  
գէ, եթէ լաւ տղայ ես, եթէ լաւ խփող ես՝  
մի խփիր, տեսնեմ, ինչպէս ես խփում»:

Տէլլը աղեղը լարեց ու նետը վրա դրեց.  
բայց իսկոյն իսկածի աշքերը սեացան, զլու-  
խը շուռ տուեց ու աղեղը ձեռքից վէր բն-  
կաւ: Կանայք վայ արին:

«Աղա, առեց Տէլլը, առաջին անգամ Հէսս-  
լերի առջև բերան բաց անելով—աղա, ինձ  
սպանիր, ինչ ուզում ես արա, ինչ պատիժ  
ուզում ես տուր, միայն ինձ ազատիր այս  
կրակից. ինձ մի ստիպիլ, որ այս նշանակին  
խփեմ, ի սէր Աստծու»:

«Զէ, ինչ եմ անում քո մեռնելդ. իմ ինչ  
չիս է հարկաւոր, ասում էր Հէսսլերը. ես,  
հէնց այնպէս, ուզում եմ տեսնեմ, թէ ինչ-  
պիսի նետ զցող ես դու: ինչ կայ կարտղա-  
ցար խօ այս փոթորիկովը Բառմզարտենին  
լի միւս կողմը անց կացնել. իմ ձեռքիցս  
նրան ազատելը նեշտ էր հա: Դէ, էլ ինչ

կայ. դու՝ որ այդպէս ամենքի համար փըր-  
կիչ ես եղել, դէ, մէկ ինքդ քեզ փրկիր,  
տեսնեմ ինչպէս ես փրկում»:

Տէլլը նետը տափից վերցրեց, նրա ոսու-  
ձեռքը դողդողում էր. ազաշանքը աչքերին,  
յոյսը կտրած, նա մէկ տեղակալի երեսին էր  
մտիկ աւլիս, մէկ երկնքին: Իսկ չորս կողմի  
բազմութիւնը առաջվայ պէս վախից լուռ  
ու մունջ նայում էր սրան . . .

Յանկարծ, Տէլլը նետամանից մի նետ էլ  
հանեց, կոխեց կռնատակը ու գաղեց: Բայց  
այդ բանը Հէսսլերի աշքովն ընկաւ:

Հայրիկ այ, հայրիկ—կանչում էր երե-  
խան ծառի տակից—անտղիր ու խփիր, մի  
վախենար, ես չեմ վախենում: Տէլլը աղեղը  
լարեց: Այդ ժամանակ Հէսսլերի մարդկե-  
րանցից մէկը էլ չըկարողացաւ համբերել.  
սկսեց տեղակալին յանդիմանել, ասելով, որ  
նա խղճմտանք չունի, քարասիրտ է, քիչ էր  
մնացել, որ նրա վրա յարձակի ու սուրի  
ուիսը տայ նրան: Բոլորն էլ իրանց ուշա-  
զըրութիւնը այս երկուսի վրայ էին դարձել  
ու սպասում էին թէ տեսնեն սրա վերջը  
ինչ կը լինի . . .: Իսկ աղեղը քանի զնում»

այնքան աւելի էր լարվում, և յանկարծ մվ էր, մվ չէր—բազմութեան միջից մէկը կանչեց. «ինձորը վէր ընկաւ, ինձորը վէր ընկաւ. Տէլլը դիպչէլ է. խփել է ինձորին, խփել է»: Երախայի պապը՝ Ձիւրսար, վախութիւնից ու ուրախութիւնից քիչ մնաց, թէ կանգնած տեղը վէր ընկնի: Պստիկ Վալտերը վերցրեց գետնին ընկած ինձորը և ուրախ ուրախ հօր մօտը վազեց, ասելով. «Հայրիկ, հայրիկ, ահա ինձորը. հը, տեսնում ես, որ ես, ասում էի. միոր ես դիտէի, որ դու ինձ չես խփիլ»:

Տէլլը որդուն դրկեց, իսկոյն չոքեց ու սկսեց փառք տալ Աստծու ամենակարող զօրութեանը: Հէսպէրը Տէլլի ձեռքից առաւ ինձորը ու ինքը իր աչքովը տեսաւ, որ իսկ որ նետը ինձորը ծակել էր ու անց կացել: Յետոյ, նա դառնալով դէպի որսորդը՝ Տէլլը, հարցրեց.

«Իսկ այն միւս նետը ինչու համար կոխեցիր կոնսատակդ՝ թագցրիր»: Առաջին սնգամից Տէլլը չիմացաւ, թէ ինչ ասի. բայց մի քիչ սուս արեց ու տոց.

Սկի՞, աղա, հէնց այնպէս, մեզանոմ այդպիսի սովորութիւն կայ»:  
«Դա էլ մի պատասխան է, որ դու ես տալիս: Զէ, դու ինձ ճշմարիտն ասա՞. մի վախենար, բաց բացարձակ պատասխանիր. ինչ էլ որ լինում է՝ լինի, ես քեզ բաշխում եմ», ասեց Հէսպէրը: Տէլլը նայեց տեղակալի երեսին ու շնչակտուր կերպով պատասխանեց նրան:

«Աստուածանից թագուն չէ՝ քեզանից ինչ թագցնեմ, աղա. մտքումս դրել էի, որ եթէ պատահմամբ նետը որդուս դիպչէր, միւս նետը քեզ էի խփելու՝ սպանեմ»:

Տեղակալ Հէսպէրը երկար լրութիւնից յետոյ ասեց.

«Դէ, հիմա ինչ որ էլ ուզում է լինի, ես քեզ խօսք տուի, որ կը բաշխեմ քեզ. կեանքդ քեզ եմ բաշխում. իմ խօսքս խօսք է, ասածս ասած: Բայց որովհետեւ հիմա ես իմացայ քո չար մտաղրութիւններդ՝ զրահամար էլ ես քեզ մի այնպիսի ծակ կոխեմ, որ ոսկի Աստծու արգար լոյսի երեսն էլ չը տեսնես: Էյ, տղէրք, ձեզ հետ եմ այս բոպէիս որա ոտը ձեռը մի լու կապուեցէք»:

Ասելն ու անելը մէկ եղաւ. զինուորները  
իսկոյն վրա թափվեցին՝ իրանց մեծի հրա-  
մանը կատարեցին։ Բազմութիւնը Տէլի չորս  
կողմը կարեց. ամենքն էլ սկսեցին նրան  
մնաս բարե ասել։ Քաջ որորդը օրհնեց իր  
որդուն, ասելով.

«Ահա այնաեղ է քո հայրիկը, այնաեղ՝  
երկնքումն է նա, նրան ազօթիր գու միայն  
կենդանի լինես, ինձ էլ Աստուած կօգնի։  
Այս՝ ինչ որ քեզ ասեցի, կասես մօրդ»։

Այս ասելով, նա համբուրեց Վալ'տերին ու  
բազմութեանը զլուխ տալով և մնաս բարե  
ասելով, Հէսոլերի ետեկց ընկած՝ գնաց. նա  
պահապաններով շրջապատված էր։ Տեղա-  
կալը վճռեց իր ասածը կատարել, այսինքն  
Տէլին մի այնպիսի տեղ զցել, որ նա էլ  
Աստծու տուած լոյսը չը տեսնի. նաւակով  
նրան Ֆիրվալշապափ լճովը անց կացրեց  
ու տարրու իր կիւսնախտ ասված հեռու  
ամրոցը։ Տէլը կապած ու կապկապած ըն-  
կած էր նաւակի յատակին և ինքը իր մո-  
քում արգէն մնաք բարե էր ասում կնոջ ու  
որդկերանց։ Նաւակումը Տէլից ու Հէսոլե-  
րից բացի նստած էին՝ նրա զինակիրը և մի

քանի թիավարներ. իսկ Տէլի նեպամանը ու  
աղեղը ղեկի մօտ էին գանվում։ Յանկարծ  
սարերից մի այնպիսի քամի վեր կացաւ,  
մի այնպիսի քամի, որ վախութիւնից քիչ  
մնաց թէ թիավարների չունչը կորպի. էլ  
նրանցում ջան չէր մնացել. ամենքն էլ կար-  
ծում էին, որ էլ պլծում չը կայ, որ կորան  
վնացին։ Հէնց այդ միջոցին՝ նրանցից մէկը՝  
դառնալով դէպի տեղակալը, ասեց.

«Աղա, էլ մեզ պլծում չկայ. բոլորեք-  
եանս մի մազից ենք կախ. ոչ ղեկավարը,  
ոչ մենք՝ թիավարներս չենք իմանում, թէ  
ձանապարհը այս քարքարուում որտեղով է  
գնում; Բայց Տէլը մեզ հետ է, նա համ ուժեղ  
է, համ ղեկավարել դիտէ, ուրեմն, աղա, ինչ  
կը լինի, որ մէկ հրամայեք նրան, որ մի քիչ  
մեզ համար ղեկավարութիւն անի»։

Իսկոյն յետ արեցին Տէլի ոտուձեռքը.  
Հէսոլերը նրան հրամայեց, որ ղեկի մօտ  
նրանի, իսկ զրաւիսարէն խոստացաւ ա-  
զատութիւն շնորհել։ Տէլը նստեց, ուր  
հարկին էր, ու սկսեց ղեկավարել բայց միե-  
նոյն ժամանակ իր աչքի տակով նայեց, թէ  
տեսնի, որտեղ է աղեղը. իսկ զրանից յետոյ

աչքը զցեց ժայռերին ու սկսեց ման գալ  
ու գտնել վեր ցատկելու համար մի յար-  
մար ժայռ։ Յանկարծ նրա աչքը վերև  
տափակ մի ժայռ տեսաւ։ Ալիքների գլխին  
կախ ընկած, դիք ու բարձր ժայռ էր և մեծ  
հնար ու սիրտ էր հարկաւոր, որ մարդ կա-  
րողանար նաւակից այնտեղ ցատկել։

Հը, աղերք, զօշաղ դրար եկէք\*), զօշ-  
չաղ՝ գոռաց Տէլլը թիավարներին դառնալով.  
մեր դժուարը մինչև այն ժայռն է է, տես-  
նում էք. այն տեղ հասանք թէ չէ՝ էլ այն-  
քան վախ չըկայ։ Թիավարները, որքան  
իրանց ուժումը ոյժ կար, թիերին զոռ-  
տուին և մի երկու րոպէ չանցած՝ նաւակը  
հասաւ իրանց ուզած տեղը։ Եյդ ժամանակ  
Տէլլ «այ Աստուած» ասելով ու իր գէնքը  
ձեռքը զցելով, հը արեց՝ ցատկեց ու զինքը  
զցեց ժայռի գլուխը. իսկ նաւակը ոտով  
զրոն տուեց ու ալիքների ոէխը զցեց։

Զինորսը իր մանուկ որդու հետ լճի ա-  
փին կանգնած սարսափով նայում էին այս  
բանին. նրանք տեսան, թէ ինչ հրաշքով

աղասավեց Տէլլը ու հրձուանքով ողջունեցին  
այդ քաջասիրտ տղամարդուն։ Վիհէլմ Տէլ-  
լին նրանք պատմեցին, որ նրան բռնելուց  
յետոյ շվեյցարացիք մի քիչ կոտրվել են։

«Գնա կնօջս մօտ ու ասա, որ ես աղատ-  
վել եմ, բայց գեռ թագ եմ կենում. ով գի-  
տէ, գուցէ տեղակալը աղատվեց» ասեց  
Տէլլը ձկնորսին, որը նոյնպէս մասնակից էր  
Ռիւտլիում եղած խորհրդին։ «Իսկ աներոջու-  
ե առհասարակ Ռիւտլիում եղածներին, շա-  
րունակեց Տէլլը, կասես, թնդ գարդ չանեն  
ու քէփները սազ պահեն. կասես, որ Տէլլի  
ձեռքը հիմա աղատ է և շուտով նրա անու-  
նը վեր կենի ու նրա մասին ամենքն էլ  
կը սկսեն խօսել։ Իսկ հիմա որդիդ թնդ ա-  
ռաջս ընկնի ու ինձ տանի Բրունին, որով-  
հետեւ իմ այնտեղ լինելս հարկաւոր է։»

Ինչքան էլ որ ձկորսը հարցուափորձ արեց  
Տէլլին, թէ գնում է Բրունին ինչ անի, ինչ  
կայ, ինչ չըկայ ևայն, բայց որորդը ո-  
չինչ էլ պատասխան չը տուեց. երեխայի  
հետ միասին ճանապարհ ընկաւ ու արագ ա-  
րագ, նեղ կածանը բռնելով, գնաց գէպի ան-  
տառը։ Ասանց հանգստանալու, համարեա-

\* ) «Դրար գալ», նշանակում է շարժվել.

թէ, վազէվազ, երեք վերսու ճանապարհ կը նալուց յետոյ, նրանք հասան Բըռունին. այնտեղից մի զառիվայր ճանապարհ տանում էր մինչև Կիւսնախտ, ուր և ձկնորսի տղան Տէլին թողեց ու վերադարձաւ տուն։ Այս ճանապարհի երկու կողմն էլ մոռայլ ժայռեր էին պատել. նրանցից մէկը՝ որ թփերի մէջ կորած էր, մի փոքր դէպի առաջ էր գուրս ցցվել և հէնց այգտեղ կանդնեց մեր քաջ սրաորդը ու թուլացած՝ նստեց այնտեղ քարի նստարանի վրա, որը նեղացած ճանապարհորդների համար էր շինված։ Վէլհէմ Տէլը մտքումը դրել էր մի կըտրական բան անել։ Նա զիտէր, եթէ աէրը մի արանցէ, տեղակալը զուրս եկաւ լնի ափը, հէնց նոյն իսկ այս ճանապարհովն է դալու Կիւսնախտ։ Տէլը մտազրեց թագ կենալ թփերի միջին և այնտեղից նետով խիել ու սպանել Հէսալերին. «Ես էլ կը փախչեմ դէպի ժայռերը, կը թագնիւմ ու դրանվ նրա մարդկերանց ձեռքից կը պրծնեմ» ասում էր նա ինքն իրան։ Մտածմունքների տակ նրա սիրառ այնպէս էր ճնշված, որ կարծես թէ մի ծանր քար էին զցել նրա

վրա։ Մինչև այսօրվան օրը Տէլը մարդու վրա, որ ասես, մի անգամ էլ ձեռք չի բարձրացրել. միշտ սպանել է, վեր է զցել վայրէնի կենդանիներ և գագաններ, ուրիշ ոչինչ. իսկ հիմա իր նման մարդուն պիտի սպանի, մարդասպանի անունը պիտի ստանայ։ Ա՛խը մի բան էլ կայ. չարագործ Հէսպերի կատաղութիւնից պիտի սպաշտապանի իր կնոջը, երեխաններին և քաղցր հայրենիքը։ Այս թշուառ նետովը Տէլը կազմատի իր հայրենի երկիրը. . . . Նո շատ սպասեց. անհամբերութեամբ նայում էր դէպի ուղին և շատ նայելուց աչքերը ջուր կտրեցին։ Մօտից մի քանի մարդ անց կացաւ, բայց ոչ մէկն էլ չէր իմանում, թէ տեղակալ Հէսպերը երբ է անց կենալու։

Մի Արմգարդա անունով զիւղացի կին էլ, իր փոքրիկ երեխաններով, գուրս եկաւ ու ճանապարհին կանգնեց։ Այդ կինը լսել էր, որ այդտեղով անց է կենալու Հէսպերը և այդ պատճառով եկել էր այստեղ սպասելու մինչև նրա գալը, որ եկած ժամանակ ընկանի նրա սաները ու խնդրի, որ իր մարդուն հանել տայ բանդից։ Տէլի և Արմգարդայի

մօտ մի քանի մարդ էլ հաւաքվեց։ Յանկարծ, ճանապարհովը մի ձիաւոր, ձին քըշելով անց կացաւ։ «տեղակալը, տեղակալը գալիս է» գոռաց նա։

Ինչպէս որ վերև ասեցինք, ժայռերից մեկը մի փոքր առաջ էր գուրս ցցվել՝ դէպի ճանապարհի մէջը։ Ժայռի զլուխը թփերով պատած էր։ Հէնց որ Տէլլը ձիաւորի խօսքերը լսեց թէ չէ իսկոյն տեղից վեր ցատկեց, մտաւ թփերի մէջը կորաւ։ Իսկ գիւղացի կինը իր երեխաների հետ գնաց ճանապարհի մեջաեղում կանգնեց։ Վերջապէս, դուրս եկաւ Հէսովերը իր զինակրի հետ միասին՝ երկուսն էլ ձի նստած։ Արմգարդան վազեց դէպի ձիաները ու նրանց առաջը կտրեց։

«Ի՞նչ ես ուզում։ Հեռոն կաց ճանապարհից։ ճանապարհ» առուր» գոռաց տեղակալը։

«Աղա, Աստուած սիրես, խեղճ եմ. ազատիր իմ մարդուս, արձակիր նրան, ասեց խեղճ կինը։ Նա գնում էր սարերը խոտ հարում ու դրանով մեզ պահում։ Ահա այժմ վեց ամիս է, որ նա բերդումը նստած, քո դատաստանիդ է սպասում, մենք էլ առանց

նրան մնացել ենք մի կտոր չոր հացի կարօտ ու քիչ է մնում, որ քաղցածութիւնից մեռնենք»։

«Հեռոն կացիր, կորիր, դէ։ Լաւ ժամանակ ես գաել, խօսք՝ բան ունես ասելու, եկ կիւսնախտ։ հիմա սրա ժամանակը չէ» ասում էր Հէսովերի զինակիրը։ Բայց կինը տեղիցն էլ չէր շարժվում, կանգնել էր ու լաց լինում։ Հէսովերը շնացաւ ու հրամայեց որ նրան բռնեն. բայց Արմգարդան, ձիան սահնձը բռնելով, լացի ձայնով ասում էր.

«Զէ, ինչից եմ վախենում. Էլ ինչ ունեմ կորցնելու որ կորցնեմ։ Ի՞նձ էլ, երեխաներիս էլ գցիր ձիուդ սախ տակը ու կարկոխտուր։ Աշքերդ չուում ես, կարծես թէ վախենում եմ. ինչքան ուզում ես չոիր։ Տունըս քանզիւլ է ու պրծել. այսքան անբաղդութիւն տեսայ, որ էլ ինձանում յոյս չը մնաց» և իսկ որ, այս ասելով, Արմգարդան երեխայոց հետ միասին ընկաւ ձիաների առաջը ու դուռաց.

«Կոխ տուր, կոխ տուր, որբ ու անտէրունչ մնացած բալաներիս քշիր, քշիր ձիդ ու անց կացիր մեղանով, մեռնենք ու պըրծ-

նենք քեզանից լաւ է՝ քան թէ այսպէս տպրենք. էլ բան չը մնաց, որ դու մեր գլուխը չը լինես բերած: Սևանայ քո օրը, որ մեր օրը սեացըիր»:

Հէնց այդ միջոցին տեղակալի առաջը դուրս եկաւ մի գիւղական հարսանիք իրանց դափուգուրնայով: Հարսանիքաւորների խումբը, այս սրտաճմլիկ պատկերը տեսնելուն պէս, սառչեց ու խկայն տեղնուտեղը կանգնեց. իսկ երաժիշտների ձայները այնպէս կարսից, որ հէնց խմանաս, թէ փորները ընկաւ:

«Ե՞լ ծառաներս, որտեղ էք. Եկէք այս խելքից կնացած կնոջը քաշ տուեցէք՝ ճանապարհից հանեցէք. Եթէ ոչ, իսկ որ ոսնակուս կանեմ ու անց կենամ» բղաւում էր Հէսալերը: «Աս ինչ յանդնութիւն, համարձակութիւն է, ամ էր մնացել. Էլ հանգառութիւն չեն տալիս մարդու, ճանապարհին են բռնում. իրանց հարսանիք-մարսանիքներով ճանապարհս են կարում. Անպիտաններ, շնունանիքաւաներ, անիծածներ անիծածներ, ես ձեզ կասեմ. տեսէք ես ձեղ ինչ կանեմ. Ճեր գլխին մի օյին բերեմ, որ... այնպիսի օրէնքներ հնա-

բեմ ձեղ համար, այնպիսի պատիժներ. որ...»: Բայց յանկարծ, գեռ խօսքը չըփերջացրած, Հէսալերը ձեռքը գրեց սրտին ու պինդ սեղմեց. նեար գիպչել էր նրա սրտին: Նա մի այս կողմ՝ մի այն կողմ՝ թեքվեց ու վէր ընկաւ ձիուց. «Վայ, սա Տէլլի նետն էր» այս էր տեղակալ Հէսալերի վերջին խօսքերը:

Եւ ձշմարիս որ, այն րոպէին քարի գրի խին երևաց Վիլհէլմ Տէլլը: «Հը, նետ գրցողին ճանաչեցիր: Հիմտ կասեմ, որ սրանից յետոյ աղաս ենք, գերութեան վերջ առւինք, մեր հայրենիքը պըծաւ քեզանից. Էլ չես կարող վնաս տալ» այս խօսքերը ասելով Տէլլը կորաւ ժայռերի միջին.

Ամեն կողմից ժողովուրդը վագ էր տալիս դէպի ճանապարհը. հարսանիքը ցրիւ եկաւ: Ամենքն էլ մեռնող տեղակալի չորս կողմը կարեցին և նայում էին իրանց այդ չարագործի վերջին տանջանքներին: Որ անս, սկի մէկն էլ տեղից չը շարժվեց, թէ ինչ է նրան օգնութիւն հասցնի. ոչ մէկի երեսին էլ ցաւակցութեան նշոյն անզամ չէր երեսում: Դեռ այդ ոչինչ, հէնց որ նոր իր վերջին շունչը տուաւ թէ չէ, իսկոյն

հարսանիքի գիւղական երաժիշտները մի ժողովրդական ուրախ երգ սկսեցին ածել. ամենքը սկսեցին մէկմէկու վզով ընկնել իրար համբուրել գոռալ ու գոչել. «ազատ ենք. ազատ, այ եղայրներ, բարեկամներ. մեր չարագործը սատկեց՝ պրծաւ. սրանից յետոյ մենք ազատ ենք նրանից բոլորովին ազատ: Գէ, շնւտ արէք, աարերումը կրակներ վառեցէք դրանով ենք իրար նշան տալու: Ամեն մարդ թնդ գէնք վերցնի, զնում ենք. եկէք զնանք քանդենք բերդերը, աւերակ դարձնենք, կոտրատենք բանդերի դրոները... փշրէնք մեր գերի ընկած եղայրների շղթաները ու ազատենք նրանց»:

Բոլոր բազմութիւնը աղմկալի կերպով ցըրիւ եկաւ. այս զառիվայր ճանապարհին մենակ զինուկիրը մնաց, որը իր տիրոջ գիտկի վրա ընկած լաց էր լինում:

Տէլլ կինը՝ չեղվիգան, ուրախութեամբ լսեց, որ իր ամուսինը կէնդանի է և շուտով գալու է տուն: Նա արդէն մարդուն մեռած էր համարում և շատ զան արտասունք էր թափել նրա վրա. իսկ այժմ իր երեխաների հետ միասին նրա գալուն էր սպասում,

բայց հանգիստ չէր կարողանում սպասել: Սեղանի վրա ընթրիք դրեց ու կրակ վառեց, որ համ Տէլլը ցրափց տաքանայ, համ էլ նրա շորերը չորացնի:

«Երեխանյք, կրկնում էր չեղվիգան անդագար, գիտէք ինչ կայ. ախր այսօր հայրիկը գալու է. գիտէք թէ չէ. արդեօք իմանում էք, որ նա ազատվել է, որ մենք ամենքս էլ ազատվել ենք: Տեսնում էք՝ դուք ինչ հայր ունէք. նա վրկեց, նա ազատեց իր հայրենիքը. նա մեր պարծանքն է, ձեր հօր անունովը պիտի պարծենաք, որդիքս»:

Բայց փոքրիկ վալ'աերը ուզում է ցոյց տալ, որ ինքն էլ կայ. չի ուզում որ իրան մոռացած լինեն:

— Մայրիկ, ասում է նա, գիտէս, ախր նետը իմ զիսիս մօտով տժժալի անց կացաւ. իսկ ես. որ տաես, մի մազի չափ էլ չը ծովեցիք»:

— «Վճայ, կծիմ քեզ, ուտեմ քեզ, նախշուն բալաս. այ դու իմ սիրտս, իմ հոգին. էլի դու իմ կշտիս ես. Ասուած պապը քեզ պահեց ինձ համար» ասում էր մայրը գրկերով:

— «Մայրիկ, մայրիկ, հայրիկը եկաւ, հայ-

բիկը» ուրախ ուրախ կանչեց վիլհելմը:  
 — «Ուր է, ուր հարցրեց Հեղիկան, նա  
 մի ուղեց ամուսնի առաջը վագել, բայց ահ-  
 ղեց շր կարողացաւ շարժվել, ուրախութիւ-  
 նից քիչ մնաց թէ վէր ընկնի. դրան շրջա-  
 փայտից (շարչիվա) բռնելով, մի կերպ ի-  
 րան պահեց: Տէլլը մտաւ սենեակը, երեխայ-  
 քը խալոյն վագեցին ու փաթաթվեցին հօրը  
 վզով: Տէլլը դառնալով դէպի կինը, ասեց:

— «Աղջի Հեղիկան, Ասառուած մեղ օգնեց:  
 Դէ, հիմիկանից դէնը էլ մենք անբաժան  
 կը լինենք»:

— «Պէտք է իմանայիր, թէ քեզ համար  
 ինչպէս էի վախենում» ասում էր Հեղիկ-  
 ան լարով ու զրկելով իր մարդուն:

— «Դէ, լու է, հանգստացիր, ամեն ինչ  
 անց կացաւ՝ պրծու, տեսնում ես, ես էլի  
 ձեր կշտին եմ, ձեզ հետ միասին»:

— «Հայրիկ, բաս քո աղեղդ ուր է» հար-  
 ցրեց Վալտերը:

— «Մի սուրբ տեղ եմ զրել՝ մատուում,  
 որդիս: Էլ որսի համար ինձ հարկաւոր չէ,  
 պատասխանեց Տէլլը որդուն:

Հեղիկան, զարհուրած, յետ քաշվեց ա-

մուսնուց, առելով «ապահովիր, տան, դու  
 սպանեցիր... այս ձեռքը... մարդասպանի  
 ձեռք է...»:

— «Եյն, տեսնում ես, այս ձեռքն է փրր-  
 կել մեր երկիրը. սա է ձեր պաշտպանը, ա-  
 սեց Տէլլը համարձակօրէն: Ես մաքուր  
 խղճմանքով եմ ձեռքս դէպի երկինք բարձ-  
 րացնում»: Հենց այդ միջոցին ներս վագեց  
 փոքրիկ վիլհելմը. նա գնացել էր միւս սե-  
 նեակը, որ հօր համար չոր շոբեր բերի:

«Հայրիկ, կանչում էր նա. ներս վագելով,  
 պապը գալիս է, նրա ետեխն էլ մի մէծ,  
 մէծ բազմութիւն: Քեզ կանչում են ու  
 առւմ են, որ դուքս գաս փողոցը»:

Տէլլի կնոջ և երեխաների հետ միասին  
 դուրս եկաւ դուռնոր: Եւ իսկ որ, մեր քաջ  
 որսորդի տան առաջին մէծ բազմութիւն էր  
 հաւաքիւր. Վալտեր Ֆիւրսան էլ էր նրանց  
 միջին: Տէլլի որդիները արդէն վագել էին  
 ու գնացել նրա մօտ: Բազմութեան մէջ  
 կանայք էլ կային, երեխաներ էլ. կային և  
 ազնուականներ՝ որոնք նոյնպէս խառնվել  
 էին ապստամբների հետ: Աղջիկերը ձեռք-  
 ներին մի մէծ ձող բռնած, որի ծայրին

սպանված Հէսոլերի գդակն էր ցցած, ծի-  
ծաղելով ու ծաղը անելով, դէպի առաջ էին  
զալիս. երաժիշտներն էլ իրանց փողերն էին  
փչում: Հէնց որ Տէլլը անից դուրս եկաւ  
թէ չէ, իսկոյն բազմութիւնը նրա առաջը  
կարեց՝ կիսաշրջան կազմելով. երաժշու-  
թիւնը, ծիծաղը, ուրախութեան ձայները,  
բոլորն էլ նոյն բոպէին կարվեց. բազմու-  
թեան միջից առաջ եկաւ Տէլլի աներ՝ Վալ-  
տեր Ֆիւրսար, Մելլստալի ու Շտատֆախե-  
րի հետ. նրանք մօտեցան սրաշարժ եղած  
Տէլլին ու համբուրեցին նրան,

«Դէ, Վիլհէլմ, մենք եկել ենք քեզ  
չորհաւորելու ու չորհակալութիւն անելու  
քեզանից: Մեր հայրենիքը հիմա բոլորովին  
ազատ է: Ամեն ինչ այնքան շուտ, համ էլ  
այնքան լաւ զլուխ եկաւ, որ սկի այդպէս  
մենք ինքներս յոյս չունեինք: Հէնց որ դու,  
տեղակալին ապանելուց յետոյ փախչեցիր  
ու թագ կացար սարերումը թէ չէ՝ իսկոյն  
քեզանից յետոյ սարերումը կրակներ վասե-  
ցին ու բերգերի վրա յարձակվեցին: Քո  
նետի ձայնն էր, որ ամենքի մէջ ապատամ-  
բութեան շարժում զցեց: Մեր թշնամիները

յաղթվեցին. ջարդուփշուր եղան. նրանց  
բոլոր բերդերը այժմ մեր ձեռքին է: Այն  
բանդը՝ որ մենք մեր ձեռքով մեզ համար  
էինք շինում, քանդեցինք ու աւերակ գարձ-  
րինք, հիմնովին աւերակ: Տեղակալ Լեան-  
դորերգը առաջ մի ուզեց փախչել, բայց  
Մելլիստալը նրա ետեկից ընկաւ, հասաւ ու  
բոնեց՝ բերաւ իր կուրացած հօր մօտ: Ծե-  
րունին նրան չէր ուզում բաց թողնել,  
միայն նա երգում կերաւ, որ էլ Շվեյցա-  
րիայում չի մնալ: Մենք մենակ թագաւո-  
րիցն ենք փախենում, բայց Աստուած նրան  
էլ իր արարմունքների համար պատիժ հասց-  
րեց: Նա խլել է իր եղբօրորդու ձեռքից  
նրա ժառանգութիւնը, նա էլ խփել է՝ նրան  
սպանել: Եւ վերջապէս, թագաւորի որբեւ-  
այրի մնացած կողմիցն էլ մարդ է եկել ու  
թուղթ բերել. այդ թղթովը նա մեզ յետ է  
տալիս մեր առաջվայ իրաւունքները: Հիմա,  
ինչպէս տեսնում ես, Տէլլ, սրանից յետոյ  
մենք ազատ ենք և հէնց զրո համար է, որ  
այսքան բազմութեամբ եկել ենք քեզ չոր-  
հաւորելու, իբրև մեր ազատողին: Տէնում  
ես այս սարերը. քանի որ սրանք այստեղ

ե՞ն՝ իմացած լինես. որ քո անունդ միշտ կը  
յիշվի, միշտ կը մնայ. այն չեն մոռանալ,  
որ Տէլլը նետով խփեց ու իր հարազատ որ-  
դու գլխից խնձորը թոցրեց. որ Տէլլն էր,  
որ ազանեց Հէսսլերին ու ազանեց Շվեյ-  
ցարեան»:

Կեցցէ մեր Տէլլը, կեցցէ. կեցցէ մեր  
փրկիչը, կեցցէ մեր ազատողը կեցցէ—այս  
ազգիալի գոռում ցոչումները և փողերի  
ձայները կարեցին ֆիւրստի խօսքերը:

Հեռուում, չորս կողմի զիւղերում, զան-  
գակների ձայնն էր, որ տարածվում էր գե-  
պի ամեն կողմ, նրանց զրբնդ-զրբնդոցն էր,  
որ սար ու ձոր լցել էր ու ամեն տեղ էլ  
ձայն էր տալիս. Ասեղ ու այնտեղ կը-  
րակներ էին վառվում ու պլալում: «Ուսայ,  
հէյ, ուսայ, ազատ ենք ազատ, ազրի  
Տէլլը, ազրի. կեցցէ նա, կեցցէ»—ամեն  
տեղ էլ այս էր լովում:

Այս բանը 1308 թուականի կազմնդ օրն  
էր:



ՀՀ Ազգային գրադարան



NL0323084

14563

